

Երեսնյա այսպես

**ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԱՍՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

17 մարտի

ՀՀ մարդու իրավունքների դաշտում

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրելի Բ Ծայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը կարեւորեց մարդու իրավունքների պաշտպանի առաքելությունը՝ բարձր գնահատելով այն աշխատանքը, որ իրականացվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղ գտնող խնդիրների արդարացի լուծման գործում: Այս

պան Արման Թաթոյանը, խոսելով ազգային արժեքների ու ավանդույթների պահպանման, ինչպես նաեւ մարդու իրավունքների պաշտպանության գործում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաքելության մասին, կարեւորեց վերջինիս եւ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի միջեւ գործակցությունը:

Զրույցի ընթացքում խոսվեց Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը վե-



համատեքստում Լորին Սրբությունն անդրադարձ կատարեց հայ հոգեւորականների բերած հոգեւորական ծառայությանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ ՀՀ Հիմնական օրենքում, հիվանդանոցներում եւ քրեակատարողական հիմնարկներում՝ ի նպաստ նաեւ այդ կառույցներում գտնվող մարդկանց իրավունքների պաշտպանության: Իր հերթին ՀՀ մարդու իրավունքների պաշտ-

րաբերող խնդիրների եւ դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին:

Վերջում Լորին Սրբությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին մաղթեց Աստծու գորակցությունը՝ դժվարին իր առաքելության մեջ: Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Մ. վրդ. Անասյանը, Կենտրոնական

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա



Մարտի 18-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրելի Բ Ծայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը միջեկեղեցական չորսօրյա այցով մեկնեց Ֆինլանդիայի Հանրապետություն՝ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու առաջնորդ արքեպիսկոպոս վեր. Կարի Մեկկինենի եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ, Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի Լեո արքեպիսկոպոսի հրավերով:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների վերատեսուչ Գեորգ եպս Սարոյանը, միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Մ. վրդ. Անասյանը, Կենտրոնական

Կենտրոնական Եվրոպայի եւ Սկանդինավիայի երկրների հայրապետական պատվիրակը Ֆինլանդիայի հայ համայնքի անունից իր որդիական շնորհակալության ու բարիգալստյան խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ ընդգծելով այն դրական տեղաշարժերն ու զարգացումները, որ Ֆինլանդիայի հայորդյաց կյանքում տեղի էին ունեցել վերջին մի քանի տարիներին:

Այնուհետեւ հայ համայնքի հետ հանդիպման համար իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հատկապես կարելորդելով համայնքի կազմակերպվածության ու համախմբման ոգին: Վեհափառ Հայրապետն իր խոսքում մասնավորապես ասաց. «Գոհու-

26 մարտի

Նորընծա Ս. վրդ. Բաղումյանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Չաքարիա Մ. վրդ. Բաղումյանին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արդարագլարի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի: Վերջինիս ծնունդը մարտի 19-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Չաքարիա վարդապետին տրվեցին Ծայրագույն վարդապետության 10 աստիճանները:

Ներկայացնելով հայր սուրբին՝ սրբազան հայրը մասնավորապես անդրադարձավ Ծայ-

րագույն վարդապետության աստիճանի համար ներկայացված աշխատության կարեւորությունը, ապա հայցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախությամբ արձանագրեց, որ Հայ եկեղեցին այսօր զորանում է մտավորական հոգեւորականների նոր սերնդով, որոնք հայոց նշանավոր ռաբունապետների եւ հայրերի նմանողությամբ շարունակում են տարածել Աստծու խոսքը՝ նախաձեռնելով լինելով ուղղափառ դավանանքի պահպանության գործում:

Վեհափառ Հայրապետը շնորհավորեց Չաքարիա Մ. վրդ. Բաղումյանին՝ հորորդելով նրան առավել ջանասիրությամբ եւ նվիրումով ծառայել Հայ եկեղեցուն եւ ժողովրդին:

Լորին Սրբությունը հայր Չաքարիայի կուրծքը զարդարեց նաեւ Ծայրագույն վարդապետական ակադեմիայի լսելալուստ լսելալուստ:



Եվրոպայի եւ Սկանդինավյան երկրների հայրապետական պատվիրակ Տիրան վրդ. Պետրուսյանը, Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գաբրելի վրդ. Համբարձումյանը եւ Լորին Սրբության գավազանակիր Ադան արք. Երեսնյանը:

Մարտի 19-ին, Ֆինլանդիա կատարած միջեկեղեցական այցի շրջանակներում, Ֆելսինկիի յուրթերական-ավետարանական Մայր տաճարի քահանա Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրելի Բ Ծայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Ֆինլանդիայի հայ համայնքի հետ:

Հանդիպմանը ներկա էին Լորին Սրբության ուղեկցող պատվիրակության անդամները, ինչպես նաեւ Եվեիայում ու Ֆինլանդիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Արտակ Ապիտյանը:

Նախապես Հայրապետիս համար՝ տեսնելու, որ այսօր արդեն ձեր կողքին են ոչ միայն եկեղեցականներն ու ձեր հովիվները, այլեւ հայրերի իշխանությանը ներկայացուցիչները՝ ի դեմս մեծարգո դեսպան տիար Արտակ Ապիտյանի: ...Մեր մաղթանքն է, որ դուք մոտ ապագայում եւս կարողանաք համախմբվել եւ կազմակերպվել՝ պահպանելու համար ձեր հայ քրիստոնեական ինքնությունը՝ ազգային արժեքների ու մայրենի լեզվի հանդեպ նախանձախնդրությունը փոխանցելով ձեր գավազաններին:

Հանդիպման ավարտին Լորին Սրբությունը, օրհնելով հայ համայնքի ներկայացուցիչներին, նաեւ լսեց նրանց առաջարկները եւ պատասխանեց ներկաների հարցերին:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա



Սկիզբը՝ էջ 1

Մարտի 20-ին, Ֆինլանդիա կատարած միջեկեղեցական այցի շրջանակներում, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբեղիս Բ Շայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հելսինկիի յուրեբերական-ավետարանական Մայր տաճարում հանդիպեց Ֆինլանդիայի Լյութերական-Ավետարանական Եկեղեցու պետ, Տուրկույի արքեպիսկոպոս Կարի Մեկկինենի հետ:

Արքեպիսկոպոս Կերի Մեկկինենի բարիգալստյան խոսքից հետո ներկա հավատացյալներին ու յուրեբերական հոգեւորականներին իր պատգամը

փառք ենք բարձրացնում առ Բարեգույն Աստված, որ մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները շարունակում են զորանալ ու ամրապնդվել: ...Այսօր, երբ աշխարհը կանգնած է տնտեսական, մարդասիրական ու բնապահպանական ճգնաժամերի, ազգային-կրոնական հակամարտությունների և օրեցօր ավելացող անհանդուրժողականության, ահաբեկչությունների, եղեռնական ոճիրների ցավալի փաստերի առաջ, Մենք խորապես մտահոգված ենք մարդկության կյանքին սպառնացող վտանգներով, հրատապ լուծման կարոտ մարտահրավերներով, ինչպես եւ Մերձավոր Արեւելքում տիրող ծանր իրավիճակով: Այդ տարածաշրջանում իսլամական ծայրահեղական խմբավորումների կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների պատճառով նվազում է քրիստոնյաների պատմական ներկայությունը, որոնց թվում են նաեւ հայկական համայնքներն Իրաքում եւ Սիրիայում:

Հայ Եկեղեցին միջեկեղեցական եւ միջկրոնական երկխոսության ճանապարհով իր կարելին է ներդրում հակամարտությունների օջախներում խաղաղության ու կայունության ամրապնդման, մարդասիրական արժեքները հարգելու եւ ապահով ու ստեղծարար կյանքն անխաթար պահելու կամքի գործադման համար, ինչպես եւ հնարավորինս օգնություն հասցնում պատերազմական իրավիճակներից տուժածներին, փախստականներին: Մեր Եկեղեցու խաղաղարար գործունեությունը ծախվում է նաեւ Ղարաբաղյան հիմնականի կարգավորման գործում: Այսօր Ղարաբաղի Մեր ժողովուրդը Ադրբեջանի կողմից հրահրվող ամենօրյա պատերազմի վտանգի ներքո, շրջափակման պայմաններում հաճախ իր զավակների արյան գնով է պաշտպանվում իր ազատ կյանքը եւ

անկախությունը պատմական իր հայրենիքի՝ Արցախի Չանայատնությունը: Այս հիմնախնդիր կարգավորման գործում գնահատելի են Ֆինլանդիայի ջանքերը, որը եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջին համաձայնագրահանձնիքի մեկը, ինչպես նաեւ՝ այս գործընթացում ներգրավված Ֆինն դիվանագետների գործունեությունը:

...Մեր հանդիպման եւ միասնական աղոթքի առիթով գնահատանքի եւ շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Ֆինլանդիայի Լյութերական եւ Ուղղափառ ջույր Եկեղեցիներին՝ համաձայն Ձեզ, սիրեցյալ եղբայր, եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Լեո արքեպիսկոպոսի, Ֆինլանդիայի բարեխնամ իշխանություններին՝ մեր ժողովրդի զավակների հանդեպ դրսևորվող բարյացակամության ու բարեկամության համար, որ արտահայտությունն է մերձավորի հանդեպ տերունապատվեր սիրո պատգամի՝ վկայված Ֆինն բարեպաշտ ժողովրդի ողջ պատմության ընթացքում, եւ մարդասիրության, որն առաջնորդել է Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու միսիոներական առաքելության աշխարհի տարբեր երկրներ:

Այս հոգեւորականի Մենք աղոթք ենք բարձրացնում քաղաքական ու տնտեսական խնդիրներից ու հակամարտություններից ալեկոծվող աշխարհի խաղաղության համար, որպեսզի մարդկությունը կարողանա կառուցել իր բարոր ու ապահով ապագան: Թող Երկնավոր Տերն անրապնդի ու զորացնի եղբայրական ազնիվ զգացումներն ու սերն Իր Մուրք Եկեղեցում, շնորհ եւ օրհնություն բաշխի Իր Անվանը հավատացող բոլոր քրիստոնյաներին՝ ի պաշտօնություն Ընդհանրական մեկ եւ միասնական Սր Եկեղեցու, այժմ էլ հավիտյանս Ամեն:

Աշխարհում եւ մասնավորապես Մերձավոր Արեւելքում ու Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատման համար միջեկեղեցական աղոթքից հետո Մայր տաճարի սրահում տեղի ունեցան նաեւ երկու Եկեղեցապետների պաշտոնական հանդիպում ու կենտրոնի փոխանակում:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Ընկերայում եւ Ֆինլանդիայում ՀՀ լիազոր պետ Գրիգորյան Լևոնի, որի արտակարգ դեսպան Լևոնակ Ապիտոնյանը:

Մարտի 21-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբեղիս Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս, Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ Լեոյի հետ:

Կուուպի քաղաքում ուղղափառ Եկեղեցու կենտրոն եւ թանգարան այցելությունից հետո երկու Եկեղեցապետները համատեղ աղոթք մասնակցեցին Նոր Վալամ վանական համալիրում: Լեո արքեպիսկոպոսը, շնչառելով Հայոց Եկեղեցու առաքելական հնագույն ծագումն ու բերած ավանդը ընդհանրական քրիստոնեական ընտանիքում, կարեւորեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցիների միջեւ ձեւավորված շերտ եղբայրական հարաբերությունների հեռանկարների ու զարգացումների միասնական, համատեղ զանցնելու կերպով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հերթին գոհաբանությամբ առ Աստված ուրախություն հայտնեց կրկին՝ 13 տարի անց, Ֆինլանդիայի օրինյալ հոգում Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոյի եւ Նորա հավաքագրվող հոռի հետ միասնաբար աղոթք բարձրացնելու հնարավորության համար:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում մասնավորապես ասաց. «Սիրելի՛ք՝ եղբայրներ եւ ջույրեր ի Քրիստոս, այս օրերին Քրիստոսի Եկեղեցին, Մեծ պահիք ընթացքի մեջ, նախապատրաստվում է մեր Տիրոջ հրաշափառ ու հաղթական Հաղթությանը: Ե՛ք ահա դեպի Ս. Չառիկ այս ճամփորդության ընթացքում մենք եւս մեկ անգամ առիթ ունենք Ֆինլանդիայի աստվածօրհնյալ հողի վրա աղոթքով միասնաբար խորհելու քրիստոնեական միության ու սիրո վկայության մա-

սին...: Փորձություններով ու նախադրություններով լեցուն իր պատմության ողջ ընթացքում Հայ Եկեղեցին մշտապես իրագործել է քրիստոնեական միության եւ եղբայրության պատգամը՝ շնչառելով «միության ի կարեւորս եւ սեր յերկբայական» քրիստոնեական սկզբունքը:

Մենք ամենքս, իբրեւ քրիստոնյաներ, կոչված ենք մեկ հույսի, որ է Քրիստոսի բերած փրկությունը, եւ միայն այս միասնական հույսի, հավատի եւ սիրո մեջ կարող ենք զգալ մեկ մյուսի ցավն ու խնդիրները, միայն այս կերպ կարող ենք հարստանալ Ֆիստոս Քրիստոսի պարգևած

հում, եւ չլինեւ սզացող այրիներ, որ-բացած զավակներ եւ որդեկրույս մայրեր, որպեսզի ամենքն ապրեն ապաստված, խաղաղ եւ երջանիկ կյանքով: Այս մտածումներով Մեր շերմեանո աղոթքն ենք վերադառնում առ Բարձրույն Աստված՝ խնդրելով, որ Տերն օծուի մեզ Իր սիրո շնորհով եւ զորացնի ճշմարտության Իր Հոգով:

Թող Ամենաբարին Աստված օրհնի Ֆինլանդիայի Հանրապետությունը եւ այս հյուրընկալ երկրի բարեխիտ ժողովրդին՝ շնորհելով հարստեւ առաջնեթաց եւ բարօրություն, - ասաց Գաբեղիս Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:



հաղթական Հաղթության մեջ: Մեր օրեքում Մերձավոր Արեւելքում փորձվող կրոնական անհանդուրժողականությունն ու հակամարտությունները ենք ամենքս կանգնեցրել ենք հումանիտար աղետի եւ հասարակական բազմակողմ խնդիրների առաջ: Այսօրվա իրողությունները պահանջում են աշխարհի բոլոր կրոնների ու հավատացող ջանքերի եւ աղոթքների համատեղում, միասնական մոտեցում՝ առկա գինված բախումները, կրոնական ջոկով սքողված հասարակություններն ու հակամարտությունները եւ դրանցից ծնվող սոցիալ-տնտեսական ու հասարակական աղետները կանխարգելելու համար:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին պատմության ընթացքում մշտապես իր առաքելության կարեւորագույն մասն է համարել ժողովուրդների միջեւ խաղաղ համակցության, փոխհանդուրժողականության ու փոխըմբռնման հաստատման ուղղված գործընթացների իր մասնակցությունը: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն

Համատեղ աղոթքից հետո Վեհափառ Հայրապետն ու Նրան ուղեկցող պատվիրակությունը, Ֆինն Ուղղափառ Եկեղեցու նկիրապետի եւ Նրա պատվիրակության հետ միասին, հյուրընկալվեցին Նոր Վալամ վանքի վանահայր Մերգիոս վարդապետի կողմից:

Մարտի 22-ին Վեհափառ Հայրապետն ու Նրան ուղեկցող շքախումբը ծառայական վանքի աթոռային, մշակութային-վանական զանազան ձեռնարկներին ու կառույցներին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց Յոհեստու քաղաքում գտնվող Արեւելյան Ֆինլանդիայի հասախոսության ուղղափառ աստվածաբանության դպրոցում, որտեղ Նորին Սրբությունը ներկայացրեց համառոտ դասախոսություն՝ «Կա՛ր աղոթք իսլամական աշխարհի վերաբերյալ՝ հայկական մասնավոր ընկալում» թեմայով:

Հասախոսության մեջ Նորին Սրբությունը կենտրոնացավ հիմնականում իսլամական աշխարհի հետ հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու



անդրադարձավ դարաբաղյան հակամարտության առաջին օրվանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդի միջեւ սկսվող լարված երկխոսությանը եւ հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ գործադրվող ջանքերին:

«Ցավով, Ադրբեջանը չի թաքցնում խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու իր ցանկությունը, ինչը փաստում է 2016 թ. ապրիլին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում սանձազերծված ռազմական գործողությունները:

...Բարեւ պատերազմի եւ արհալիր-ծորինյալ հողի վրա աղոթքով միասնաբար խորհելու քրիստոնեական միության ու սիրո վկայության մա-

խաղաղ համակցության եւ երկխոսության օրինակների ու պատմական փորձառության վրա, այնուհետեւ պատասխանեց ներկայիցի հարցերին:

Հասախոսությանը ներկա էին նաեւ Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոն, Նույն՝ աստվածաբանական դպրոցի դասախոսներ եւ ուսանողներ:

Հավարտ դասախոսության՝ Նորին Սրբությունը, արքեպիսկոպոս Լեոյի եւ Ֆինն Ուղղափառ Եկեղեցու շքախմբի ուղեկցությամբ, ճանապարհվեց Յոհեստու քաղաքի օղակայան, որտեղից Հելսինկիի ու Մոսկվայի ճանապարհով հայրապետական պատվիրակությունը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:



ուղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր խոսքում մասնավորապես ասաց. «Այսօր փառք եւ գոհություն ենք մատուցում առ Բարձրույն Տերը, որ կրկին առիթ ընծայեց Մեզ այցելելու ձեր գեղեցիկ երկիրը՝ հրավերով ձեր եւ Ֆինլանդիայի Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ, Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոյի՝ իբրեւ մեր Եկեղեցիների միջեւ հաստատված սիրո եւ եղբայրական հարաբերությունների վկայություն:

Մենք խորին գոհունակությամբ ենք վերհիշում տասներեք տարի առաջ կատարած մեր այցը Ֆինլանդիա, եւ

րական արժեքները հարգելու եւ ապահով ու ստեղծարար կյանքն անխաթար պահելու կամքի գործադման համար, ինչպես եւ հնարավորինս օգնություն հասցնում պատերազմական իրավիճակներից տուժածներին, փախստականներին: Մեր Եկեղեցու խաղաղարար գործունեությունը ծախվում է նաեւ Ղարաբաղյան հիմնականի կարգավորման գործում: Այսօր Ղարաբաղի Մեր ժողովուրդը Ադրբեջանի կողմից հրահրվող ամենօրյա պատերազմի վտանգի ներքո, շրջափակման պայմաններում հաճախ իր զավակների արյան գնով է պաշտպանվում իր ազատ կյանքը եւ





Անահիտը հին հայոց դիցաբանի մայրությունն էր գազանություն (կանացի ողջարհուռնության) աստվածուհին էր: Երբ գլխավոր մեկնել, որ հեթանոս էր: Երբ մանենապաշտելի սրբավայրն էր, գտնվում էր Մեծ Հայքի Եկեղյաց գավառում էր հայտնի էր Լաեռ գաղթելով Լճիկազորված իր բազում ոսկե սպասներով էր թափարթած գանձերով: Երբ համբավն այն-նաև տարածված էր ժողովուրդներին մեջ, որ մ. թ. 2-րդ դարի հռոմեացի պատմագիր Հիոն Կասսիոսը Եկեղյաց գավառը Անահիտի դիցուհու անունով անվանում է Անահիտական գավառ:

Անտիկ աշխարհի հռոմեացի հռչակա-
կար ճարտարան, իրավագետ եւ պետա-
կան գործիչ Մարկոս Տուկուս Ցիցերոնը՝
Տիգրան Մեծի ժամանակակիցը, որի աշ-
խարհ առաջ ստեղծվեց նրա աշխարհակա-
նությունը, մ. թ. ա. 66 թվին հանդես
գալով Ռոմի ժողովուրդի առջեւ, ցույց ե-
տալիս, թե ինչպե՞ս Հայաստան ներկու-
մե՞ծ հռոմեացի իմպերատոր Լուկուլոսը՝
Տիգրան Մեծի հարվածներին տակ, խույս
տալով պայքարադաշտ Արտաշատից,
հասկանալով որոշեց ումե՞ծ Հայքի վեր-
նագազմանը՝ կորոպտելու Անտիկ հու-
նակավոր մեխյանի գանձերը։ Այդ ճակա-
տագրական պահին բոլոր հայրենակա-
նները եւ նախարարական տներն իրենց
գործախմբերով ոտքի ելան պաշտպանե-
լու համազգային սկիզբական սրբավայրի
եւ հռոմեացի իմպերատորին այնպիսի
հուժկու հարված հասցրին, որը 19-րդ
դարի Ռոմի պատմության ճանաչված
մասնագետ Թեոդոր Մունզեյն երեակա-
յության մեջ տպավորվել է որպես հա-
մայն Արեւելքի ժողովուրդների սրբազան
պատերազմը՝ ընդդեմ արեւմտյան քաղա-
քաւորության։

Ի դեպ, Ոսկեամայր-Ոսկեծին Ասահիտ դի-
ցուիտու տոնը հեթանոս հայերը նշում էին
գարնանը եւ պահվերկու ու ծառերի թավ
նստերով զարդարում Ասահիտի պատ-
կերն ու բազիկի՝ նրան նվիրված մեղայն-
ներում, ինչպես վկայում է Ագաթանգեղո-
սի Պատմությունը (Էջ 49): Ըստ հին տո-
մարական հաշվարկի՝ Ասահիտ դիցուիտու
տոնը նշվում էր արեգ ամսի 30-ին, Սիսա-

**ԱՎԵՏԱՋ ՏՈՆԸ՝
ԱՎՅՐԴՈՒԹՅԱՆ ՕՐ**

Նի 15-ին, որ համապատասխանում է ապ-
րիլի 7-ին:

Աստ հայոց եկեղեցական օրացույցի՝ հին տառայով ասորիկի 7-ը 1700 տարի առաջ ընդունված է եղել որպես Ավետարան տուն: Ղուկասի Ավետարանում ասված է, թե Աստված Պարթևի հրեշտակին ուղարկեց Վալիլայի Նազարեթ քաղաք՝ Մարիամ անունով մի կույսի մոտ, որ նշանված էր Չոկեթիի հետ: Եվ հրեշտակը, գալով Մարիամի մոտ, ասաց. «Ողորդես, բալով շնորհընկալ: Տերը քեզ հետ է: ՎՕրհնյա՛լ ես դու կանանց մեջ», իսկ Մարիամը, լսելով նրա խոսքերը, շփոթվեց եւ մտածում էր, թե ինչ է նշանակում այս ողջույնը: Բայց հրեշտակն ասաց նրան. «Մի վախենալ, որովհետեւ Աստծոնք շնորհի գտար: Եվ ահա կդրանաս եւ որդի կնծես եւ նրա անունը Զիսուս կդնես: Նա մեծ կլինեւ եւ Բարձրալի որդի կկոչվի» (Ղուկ., Ա. 28-32):

Եվ այն պահը, երբ Չաբքիեի հրեշտակը ողջունեց Մարիամին, քրիստոնեական է եկեղեցին համարում և սուրբ Կույսի իրազման է Քրիստոսի մարմին առնելու սկիզբը, որից ինն մօսն անց տուր Կույս Մարիամից ծնվեց Յիսուս մանուկը Բեթղեեմի այլ պուրով։ Զանի որ Յիսուս Քրիստոսի Մենկերկան կամ Աստվածաշայտնության օրը սկզբնական շրջանում հայոց է հունահռոմեական եկեղեցիներում ընդունված։ Եր հունվարի 6-ը, ռուսիի ինն մօսն հեռ գալով՝ կարծես, որ Ավետյաց տոնը, այսինքն՝ այս օրը, երբ հրեշտակն ավետեց Մարիամին Սուրբ Յոզեֆը նրա իղանալը, ընկնում է ապրիլի 7-ին, իսկ ըստ 13-րդ դարի պատմիչ Կարոսեան Արեւելոսի՝ ապրիլի 6-ին։ Այս պատմաճառով է Յայ Առաքելական Եկեղեցու առաջին քահանայապետ Գրիգոր Լուսավորիչը 4-րդ դարին սկզբում հայոց մեջ սահմանեց Ավետյաց տոնը՝ ըստ հին հայոց օրացույցի արեգամաի 30-ին, որ համապատասխանում է ապրիլի 7-ին, Սեպտիս 15-ին։

Ակներէ եւ, որ Գրիգոր Լուսավորիչը, այդ երկուս տոները միացնելով, Մարիամի տուրք եղբայրայն խորհրդի միավորել եւ Լաւե, Աւստիոն աստվածուհուն մայրութեան գաղափարը, որով եւ քրիստոնեական Ակնայաց տունը մեծապէս ընդունիլի դարձավ Լաւե տուրքարդեւ իթեանս հայերի համայն: Այն մտրել եւ վերջ մեր արքեւս իկշաւ Կարդայն Արեւելցի հաղորդում եւ, որ Ակնայաց տունը սահմանել եւ Գրիգոր Լուսավորիչը՝ խափանելու համար Աւստիոն դիցուհու պատկերին կնիկդակեւ տունը, որ պատշտուն էին իթեանս հայերը: Իսկ թա՛ւ սատարով ու ճուղերով Աւստիոն մէյանսն այցեւելու արարողութիւնը ժամանակի ընթացքում փոխեց գարնան կարթունքի հետ Նշվող Սուրկազարդի կամ Շառճաբարդի տունը, որին հարմարեցնեց քրիստոնեական նոր ծնը՝ Զիտակ մուտըը երուսաղեմ՝ Ակվազ գատկի Նարկարեյաց կիրակի:


Նախքան քրիստոնեությունը հռոմեական պետության մեջ ժողովրդի փրկած հեթանոսական տոներից մեկը Միփրայն (Միփրի կամ Մեփրի), այսինքն՝ Արեւի պաշտամունքի տոնն էր, որ նշվում էր ամեն տարվա դեկտեմբերի 25-ին, ուստի այդ հեթանոսական տոնի դեմ պայքարելու եւ նրան քրիստոնեական քննդիշ տալու նպատակով Յոննեսյան եկեղեցին որոշեց հունվարի 6-ի Աստվածայայտության տոնը առաջ բերել եւ նշել նախորդ ամսի 25-ին: Հարկադրված դրան՝ Յայ Առաքելական եկեղեցին անփոփոխ պահեց հունվարի 6-ի Յիսուսի ծննդյան պզգնական օրը, ուստի եւ անշարժ պահուով է նաեւ ապրիլի 7-ի Ավետյայտ տոնը:

Հետագա դարերում՝ հատկապես խաչարհայ աշակավանքների շրջանում, երբ ուժեղացավ կաթոլիկ բարոյափիների էքսպանսիան Հայ եկեղեցու դեմ, արտաքին ուժերի կողմից շատ փորձեր արվեցին վերացնելու հայկական ծիսակարգի եւ տոնացույցի հիմնավոր ավանդակաւ անձնձևահատկութիւնները: Բայց ղժկանքի պայքարում Հայ եկեղեցին պահպանեց իր ինքնութիւնը եւ նկիրական ավանդները:

13-րդ դարի անգլիացի եկեղեցական ժամանակագիր Ռոջեր Վեկոդլեդուրո «Flores Historiarum» (թարգմանաբար՝ «Աղոստան պատմութեան») լատիներեն տարեգրության մեջ, որն ընդգրկում է Անգլիայի պատմությունը՝ արարչագործությունից մինչև մ. թ. 1235 թիվը, միանգամայն անանկվալ հանրիպում են հայոց Ավետյաց տոնի մի եղակի հիշատակությունը։ Արարչագրելով 1228 թվին գերմանացիներ Ֆրիդրիխ II կայսեր արշավանքը Միջերկրական ծովով դեպի Պաղեստին՝ Աստծուն խոստացած իր ուխտը կատարելու համար, Ռոջերը հաղորդում է, թե տևյալ թվականին ուխտագնացության նպատակով Անգլիա եկավ Մեն Ֆայքի մի հայ արքեպիսկոպոս՝ սրբերի մատուցերին։ Երբ նա Սուրբ տեղերին եկրպագեցու։ Երբ նա Սուրբ Աբրահիմ վանք է գալիս, որպեսզի արդյոք մատուցե Անգլիայի առաջինի նահատակին՝ սուրբ Աբրահիմ (նախատակվել է Դիոկղետիանոսի օրոք՝ 303 թվականին), գրույցի ժամանակ անգլիացի վանականներից մեկը հարցնում է, թե տոնո՞ւմ է տարյոցը նրա երկունք (Ջայնյանտուն) երանելի Կույս Մարիամի մարմին առնելու տոնը։ Հայ արքեպիսկոպոսը պատասխանում է. «Ջայնյանտունը նշում է ոչ միայն սուրբ Մարիամի ե Յովհաննես Սկրտչի, այլև Երիտասույն մարմին առնելու տոնը, որ ավետեց իրնշտակը Մարիամին, որը իղացավ Սուրբ Յոզուց»։ Աշանախում է Ջայ եղեղեցու Ավետյաց տոնի հիշատակը պահպանվել է նաեւ 13-րդ դարի անգլիական տարեգրության մեջ։

Կան արդյոք բավարար հիմքեր՝ բացահայտելու հայազգի հոգեբուականի պատմական-իրավյան անձը. թվում է, թե կան: XIII դարի հայ պատմիչ Վարդանի վարդապետը (Վրեժեցի)ն է և նրան հետևելով՝ Կիրակոս Գանձակեցին, հետաքրքիր գույներով ներկայացնում են դարի առաջին կեսի սի հոգեբու գործչի վարքը. նրի անձը, երեխի լի-նելով և մեծ հռչակ վայելելով հաս-դեժ, պարուոված է խորհրդավորու-թյան թողով: Նրա կյանքը հարուստ է եղել արկածներով և որաշագան դիա-վածներով: շրջել է շատ երկրներում, մեծ առևու հանել աղարամսելի ախ-տը բժշկելով շտրիներով, որի համար էլ մահիեղակածներից ոմանք գալիս էին նրա մոտ հավաատափոխ լինելու եւ մկրտվելու նրա ձեռամբ: Այդ երեւելի կրոնավորը ոչ ալ ոք է, քան Յովհան-նէս Գանեցի վարդապետը, որ հեղի-նակ է խարտաքանական գովածների եւ աղոթների: Գանսեւու ոչ լրիվ վար-քագործւթյունը, առանձին դրվածքե-րի ու տեսիլների ձեւով, տեղ է գտել «Գիրք թղթոց»-ում, Կիրակոս Գանձա-կեցու «Պատմութիւն հայոց» գրքում եւ Յայսմալարքուն:

«Այր ոմն առաքելի, զարմանալի վարուք, գործող պատուիրականց Աստուծոյ եւ յծարձակի ի մանկանոցն, արմատացեալ քահանայական պատուով, կուսակրօն Յովաննէն անուն, ի քաղաքագիւղելոց Գառն, ուր զարմանալի արարուոյն Տրդատայ, ի սուրբ Ռիւսէն Այրի վաճառք»։ Տուան նմա եւ շնորհք բժշկութեանց, գիժեռն ղեկելով եւ արօթելով, բժշկեր զբազում ախտաւածես։ Խնորդիս ի նմանս եւ զիր պահապան անձնաց իւրեանց, եւ նա անկապաղ տալի ամենայն խնդրողացն, եւ զայս ո՛չ միայն հաւատացեալքն առնէին, այլ եւ բազումք յանեստաոխրն»։ («Գիւրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 526-532)։



Կան բազմաթիվ կետեր, որոնք թույլ են տալիս Հովհաննես Գառնեցուն նույնացնել անգլիական տարեգրության մեջ հիշատակված Մեծ Հայքի արքեպիսկոպոսին:

Շարունակությունը՝ էջ 4

**Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել
Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի
Միացյալ Թագավորության վարչապետին**

Մարտի 24-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրելի Բ Շայրագյուկ Պատիրադք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավան-ցազիր է հղել Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլան-դիայի Միացյալ Թագավորության Վարչապետ Թերեզա Մեյլի՝ մարտի 22-ին Լոնդոնում տեղի ունեցած ահա-բեկցության գոհեղիս եւ վիրավորների կազակցութեամբ:

Նորին Սրբութիւնն իր վէտակցութիւնն է հայտնի տ-հայացի Թագավորության բարեկամ ժողովրդին, գոհ-իմանելի քնտանիքներին ու հարապատաներին՝ շուտա-հուլիս ապաքինում մատթելոյ բոլոր վիրավորներին:

ներև են ծայրահեղական դրսևորումները, որոնք չունեն որևէ արդարացում ու մարտահրավեր են՝ ուղղված բոլոր ժողովուրդներին ու պետություններին: Կատարել են, որ ՄԵԾ Հրդուհախիսի բարեւեր իշխանաւթյունները կարող պիտի լինեն կախիարգելելու նմանօրինակ ճորագործությունները՝ ապախիւրդելով աստովաճաւեր Ձեր ժողովրդի կաւաւը, ապախիւրդ ու անվորոյ կարել:

... Թող երկվորյակ Տերը պահապան լինի Մեծ Բրիտանիային և զորակից լինի Ձեզ և բարեպաշտ Ձեր ժողովրդին»,- ասված է Ամենայն Յայոց Յայրապետի ցավակալական նամակում:

Կարգալույծ է հռչակվել Մովսես քհն. Մանուկյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Հարեգին Բ Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն
Կայոյ Կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ հաշ-
վոյն Է հաշվելի Մովսէս քհն. Մատնական (Վիրահայոց թեմ):

Տնօրինութեայ համար ինքն Է ծառայել Վիրահայոց թեմի ա-
ռաջնորդ Վազգէն եպս Սիրզախանյանի միջնորդափոխ
եւ Մայր Մթոր Ս. Էջմիածնի կարգապահական հանձնարարի եզ-
րակացութեւնը՝ Մովսէս քահանա Մատնականի՝ իղոցեր ծա-
ռաւորայն մարդ ինքնամալ լծուել մատաբեմար:

Կարգալուծ եկեղեցական այսուհետ դասվում է աշխարհականների շարքը եւ կկոչվի իր ավագանի անունով՝ Խորեն Մանուկյան:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Հովհան Ա Մանդակունու (478-490 թթ.) բաժին ընկավ հայրապետության ծանր ու վճռորոշ ժամանակաշրջան, երբ հայ ժողովուրդը պայքարում էր պարսից թմաթուխության դեմ և քաղաքական պայմանները խիստ անբարենպաստ էին: Նրա կաթողիկոսության առաջին շրջանն անցնում է պատերազմական գործողությունների թոհուրթոհում: Պարսից Պերոզ արքայի մահվանից՝ 484 թ. հետո Հայաստանում խաղաղություն է հաստատվում. Հովհան Ա Մանդակունին հոգեւոր ու վարչական գործունեություն է ծավալում (Մարգարա արք. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 549): Նրան վերադարձվող բարեկարգություններից առաջինը կաթողիկոսական աթոռի տեղափոխությունն է: Հայրապետական աթոռի՝ Վաղարշապատից Ղվին տեղափոխման ստույգ ժամանակաշրջանի վերաբերյալ հայագիտության մեջ առկա են հակասական՝ իրարամերձ կարծիքներ ու տեսակետներ:

Պատմագիրները եւ ուսումնասիրողները Դարում տեղի ունեցած այս կարեւորագույն իրադարձությունը վերագրում են Մելիտե Ա Մանազկերտցի (452-456 թթ.), Գյուտ Ա Արաեղացի (461-478 թթ.) եւ Հովհաննես Ա Մանդակունի (478-490 թթ.) հայրապետներին, ինչը տարակարծությունների տեղիք է տվել:

Այսպէ՛ս՝ Միքայել Չամչյանը, առանց պատմական փաստերի ու հիմնավորումների, կաթողիկոսական աթոռի տեղափոխումը վերագրում է Հովսեփ Ա Յողղոմեցի (440-452 թթ.) հայրապետի հաջորդ Մելիտեին (Միքայել

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՐՈՒԻ ՏԵՂԱԾՈՒՄԻ ԹԵՄԱՆ ՀԱՐՅՈՒ ԾԱՌԵՆ (Ե դար)

Չամչեան, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ տեառն 1784, հտ. Բ., եր., 1984, էջ 85): Վերջինս Մանազկերտի եպիսկոպոսն էր, որը եւ 452 թ. կաթողիկոս է ընտրվում: Ըստ Միքայել Չամչյանի «Հայոց Պատմութեան...» թեպետ Հովսեփ Ա Յողղոմեցին դեռեւս կենդանի էր, սակայն հայերը մտավախություն ունեին, որ պարսիկները գերությունից այդպես էլ չեն ազատի նրան, եւ Հայ եկեղեցին կմնա առանց հովվապետի, ուստի որոշում են կաթողիկոս ընտրել Մելիտե Մանազկերտցուն. «...հաւաւուրթեամբ ամենեցուն փոխեցին եւ հաստատեցին զաթոռ կաթողիկոսութեան անդ ի Ղին, յամի տեառն 452» (անդ): Միքայել Չամչյանի հիշատակության մեջ ակնհայտ անճշտություն կա:

Հուսիկ արք. Տեր-Մովսիսյանը 1904 թ. «Արարատ» ամսագրում հրատարակած «Հայրապետական աթոռի մասին համառոտ տեսութիւն» հոդվածում նստավայրի տեղափոխությունը կապում է Վարդանանց պատերազմի հետ՝ հիմնավորելով, որ այդ ժամանակ Վաղարշապատը «ավերածության ենթարկվեց, իսկ Կաթողիկոսն եւ հայրապետանոցը քայքայման վիճակի հասան...» (Հուսիկ արք. Տեր-Մովսիսյան, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2009, էջ 187): Հայոց հայրապետներն այլեւս չէին կարող այդ

պայմաններում գործել եւ ավերակներում բնակվել, ուստի «...պատերազմից անմիջապես հետո՝ 453 թվին զումարված Ղվինի Ա ժողովում, Նահատակ Հովսեփ Վայոցծորեցու տեղ կաթողիկոս ընտրվեց Մելիտե Մանազկերտցին, եւ Հայրապետական աթոռը որոշվեց տեղափոխել Ղվին...» (անդ, էջ 187-188):

Ուշագրավ է, որ ինչպես պատմիչներից շատերը՝ Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Առողիկ, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան, այնպես եւ Հայոց կաթողիկոսների գալականագրերը կազմող հեղինակները հիմնական-ընդհանուր ցուցակներում չեն հիշատակում Մելիտե ու նրա հաջորդ Մովսե Մանազկերտցի կաթողիկոսներին՝ Հովսեփ Ա Յողղոմեցի հայրապետից հետո անմիջապես վկայակոչելով Գյուտ Ա Արաեղացուն («Յովհաննու Կաթողիկոսի Պատմութիւն», Երուսաղէմ, 1867, էջ 79, նաեւ՝ «Պատմութիւն Նահանգին Սիսական. արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», հտ. Բ, Փարիզ, 1859, էջ 249):

Առողիկը եւս Հովսեփ Ա Յողղոմեցուց հետո անմիջապես Գյուտ Ա Արաեղացուն է հիշատակում («Ստեփանոսի վարդապետի Տարրութեան», Տիեզերական Պատմութիւն», Փարիզ, 1859, էջ 80): Առավել ուշ շրջանի պատ-



միչներն սկսում են հիշատակել այս երկուսին: Տվյալ ժամանակաշրջանի դեպքերին ականատես եւ վկա Ղազար Փարպեցին, ըստ էության, հիշատակում է Մելիտե Մանազկերտցուն, սա-կայն որեւէ վկայություն չունի նրա օրոք հայրապետական աթոռի՝ Վաղարշապատից Ղվին տեղափոխման վերաբերյալ. «Զանգի յետ կատարման արդյ կաթողիկոսին Յովսեփայ յաջորդեաց զկաթողիկոսութիւնն յաշխարհիս Հայոց տէր Մելիտե, որ էր յազգէն Մանազկերտեցացն. եւ զհետ նորա տէր Մովսե, որ էր եւ նա ի նոյն ազգէ: Եւ ապա ըստ Աստուծոյ տեսութեանն յա-

ջորդեաց զկաթողիկոսութիւն աշխարհիս Հայոց տէր Գիտ, որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արաեղացայ, այր լի գիտութեամբ հայովս...» (Ղազար Փարպեցի, Հայոց Պատմութիւն, եր., 1982, էջ 264): Պատմիչը չէր կարող չհիշատակել այս նշանակալի իրադարձությունը. բացի այդ՝ պատմական տեղեկությունների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ Մելիտե Մանազկերտցին բավական ծեր էր ու տալար, երբ 452 թ. դարձավ հայրապետ եւ դժվար թե նախաձեռներ կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը:

Շարունակությունը՝ էջ 6

ԿՈՍՏԱՆՈՒՆ ԵՐԶՆԿԱՅՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ



Սկիզբը՝ թիվ 4

Կոստանդին Երզնկացին բերում էր նոր կենսափիլիսոփայություն՝ աշխարհի ու մարդու մասին, որի կարիքն զգում էր ժողովուրդը: Նա մարդուն բերում է ապրելու, ստեղծելու, սիրելու գոգիներ, կապում նրան հողի, բնության, եղբայրների հետ: Անկասկած դարաշրջանում բարձրացնում է անհատին, նրբին երանկներով հայ երգի մեջ հաստատում հումանիզմի որակը, որն այնքան բնորոշ էր Վերածնության դարաշրջանի թեփանքին:

Միջավայրը դեմ էր եւ չէր ընդունում բանաստեղծին, անգետ մարդիկ նրան համարել են իրենցից ցածր, անուսում մի մարդ, որը գրում է ոչ թե Սուրբ Գրքի թեմաներով, այլ բոլորովին ուրիշ բաների մասին... Այդ ամենից բացի՝ նաեւ ուրիշ,

եղբայրներին հասկանալի միջին հայերեսով:

Այդ մասին ահա թե ինչ է գրում Ե. Պոտուրյանը. «Ռաբիի երգիչներուն առաջիններէն ըլլալով՝ Կոստանդին միանգամայն առաջինն էր, որ իր ժամանակին աշխարհաբարով կը գրէ իր ամբողջ ոտանավորները. Իր բանաստեղծական մտքի տաղանդէ մղուած է սա՝ այդ յանդգնութեան. Կոստանդին երգնկացին, լեզուի մասին, հայ Տանդէ մ' է: Երբ Տանդէն Արեւմուտքի մեջ ժողովորդեան լեզուով Աստուածային կատարելութիւնը կը հիւսեր, առօրին միեւնոյն ժամանակ Արեւելքի մէջ Կոստանդինն ալ իր աշխարհիկ լեզուով քերթուածները կը գրէր» (տե՛ս «Կոստանդին Երզնկացի եւ իր քերթուածները...», էջ 14):

Ծավալվել ու ծփում է բանաստեղծի տառապանքն իր գերզգայուն հոգում: Նրա ողբերգությունը դուրս է գալիս իր անձնականի սահմաններից, դառնում տիեզերասփյուռ, համամարդկային: Ցավերով խոցված բանաստեղծի սիրտը ի կարողանում տանել այն ամեն չարը, որ իր գոյությունն է հաստատել այս աշխարհում: Աստուծո ստեղծած չարը միայն մեկն էր՝ Կայենը, որ սպանեց իր արդար եղբորը՝ Աբելին: Այդ չարից արդեն սերմանվել է ու աճել է մեկին՝ հազար, մեծ չափերի են հասել նախանձը, նենգությունն ու սպանությունները, երկիրը լցվել է գառան կերպարանց առած գայլերով՝ գիշատիչներով ու խաբէբաներով, որոնք շրջում են կանգի ու բարեբար մարդու կերպարով եւ արդար-տուով, հափշտակում, սպանում են գաղտնաբար ու անդադար...

Ով է գալի, նա գառն եղել յաջո մարդան ինքնն տիմար. Նա շրջի հետ գառներուն, յափշտակել հետ գաղտնաբար...

Ծովանում է բանաստեղծի վիշտը, ծավալում է նրա հոգին. չարը նեղորեն է նայում բարուն, վատը՝ լավին, եւ անգետը չի կամենում իր կողքին տեսնել՝ ...ինձատուսին, դեռ ավելին:

Թէ խոսքս քաղցր ու անոյշ բռն մի երկուս ինք խրատով, Նա հեռի փախչի ի քեն եւ չընդունի ըզբեզ սիրով: Իմաստունը լույս է, իսկ անգետը՝ խավար, անգետները չար խոսքերով բամբասում են իմաստուններին եւ, փախչելով նրանցից, ներձենալու հնար իսկ չունենալով, բնակվում են խավարի մեջ. հավարին գործն՝ ի խավարն է հաստատել ծածուկ կալով. Նա լուսոյն է'որ երեւի, վախէ յայտնել զինք բաւալով...

Իմաստունն առավում է, արեգակի պես պայծառ է ու լի լույսով, բուրաստան է, անմահության ճաշակ սովող բարի պտուղ է, իսկ անմիտը խավարի տուն ու տեղ է, նրա սիրտը լի է ցավերով, մութ ու վար սանձանկներով, փշերով, անպտուղ է, քաղցած ու ծարավ, «ակն է ագահ եւ լի սովով»:

Իմաստունն աշխարհից կուշտ է եւ ուժով է, միտքն առատ է, սակայն ունի մի թուլություն. Իմաստունն ոչ երկնցի, թէ հարկանեն զինքն սըրով, Բայց յանգտ մարդու խոսից խոցի հոգով ու մարմնով: Չի անգետն եւ անըզգամս Աստուած չունի ինք գիտելով...

Միայնակության ցավն իրեն սեփականություն դարձրած բանաստեղծի սիրտը խոցվում է, որ լույսն ու բարին շրջապատված են խավարով ու չարով: Անմահության պտուղներ սերմանող իմաստուններն էլ շրջապատված են տիմար ու ան-

գետ, տիեզերական ճշմարտությունից անմասն մնացող մարդկանցով, բովանդակ լցվել է գայլերով.

Բովանդակ աշխարհս է գալլ եւ միաբան կսի մի ժողով, Նա գառին ո'ր կայ հանգիստ մէջ զալերուն ինք կենալով, Ով խելօք է եւ ուզէ զինք կենալի սըրտի կամով, Թող լինի ի յաշխարհես ինք անձանթ՝ հորաժարելով:

Ցայտուն արտահայտելով իր ժամանակի դրաման՝ Երզնկացին պոզիայի մեջ բարձրացնում է հոգեկան խոր տեղաշարժ: Այս ճանապարհին բազում մարդկանց հոգու պատկերն ստեղծելուն հետամտ՝ բանաստեղծն անդադառնում է եղբայրների թեմային, որոնց համար «ի սրտ» արտասվում է ու «շատ անգամա լալիս», հիշում է նրան, ով սիրող սրտի եղբայրությամբ է իրեն նայել: Խոսքը վերաբերում է ժամանակի մտածող, ապրող, լուսավոր մարդկանց, կյանքի մարդկանց, որոնց իր երգն ու խրատը եր բերում մեծ բանաստեղծի՝ հակառակ կանգնելով հիւսավորք, մեղալ մտածողության ու թեմաներին:

Ովքե՛ր են այդ սիրելի եղբայրները, որոնք հոգեհարազատ են բանաստեղծին: Հեկվելով Լեոնի հաշիկյանի ուսումնասիրության վրա՝ մենք տեսնում ենք, որ այդ ժամանակ Երզնկայում եղել է մի կազմակերպություն, որը կոչվել է «Եղբայրություն» (Լ. հաշիկյան, 1280 թ. Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», տե՛ս «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Ե., 1951, թիվ 12, էջ 76)՝ իր մեջ ներառելով երիտասարդների՝ արհեստավորների ու վաճառականների խավերին: Անտարակոս, այս եղբայրությունները մթնոլորտ են ստեղծել հոգեւոր նոր շարժման համար, դարձել բարոյական հենարան: Նրանք բանաստեղծից պահանջել են «աշխարհի բան», «քաղցրահամ բան», սիրտ, բնության ու վայելքի երգ: Եվ, այնուամենայնիվ, նրա ճանապարհը փշտոտ է:

Շարունակությունը՝ էջ 8



ԿԱՀԱՆ
ԹԵՔԵՅԱՆ

Սկիզբը՝ թիվ 2-5

ԲԱԺԱՆՈՒՄ

Թեքեյանի եւ Սյուրմեյանի նամակագրությունը, որը նրանց հարաբերությունների միակ միջոցն էր, թեթեւեղեղ լուսնակարների փոխանակման մի քանի դեպքերը եւ դրամական փոխանցումները, գնալով ավելի ու ավելի ընդհատումներով է սկսում ընթանալ: Ավելին՝ այդ նամակներում նվազում է մանավանդ ոգեւորության ու հավատի այն ոգին, որ թեւածում էր նախկինում: 1924 թ. հունվարի 20-ին Փարիզից գրած իր նամակում Թեքեյանը մտածողություն է հայտնում, թե «կը կարծես թէ կը մոռնաս, պիտի մոռնաս, պիտի չհիշտես նամակս ու գիտ...», եւ ապա հարց տալիս. «Որքան՞ ատեն ունիս ինծի...» (Նամակային էջ 260):

Թեքեյանի կյանքում 1925 թվականն ամենազվարտ տարիներից մեկը եղավ: Կ. Պոլսում մահացավ նրա մայրը, Ալեքսանդր Միսանիկյանն ու Արտաշես Կարինյանը ելույթներ ունեցան Թեքեյանի դեմակարած կուսակցության ու նրա դեմ, մի շարք հիվանդությունների բարդացման պատճառով Թեքեյանը դժկամությամբ է իրականացնում «Արեւի» խմբագրապետությունը, ամիսներով նամակ չի ստանում նաեւ Սյուրմեյանից: «Կը մեծնաւ», գրում է Թեքեյանը 1925 թ. հուլիսի 29

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ - ԼԵԿՈՆ ՉԱԿԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ. ՄԵՐՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՆԴԱՐԱ ԲԱԺՎՆՈՒՄ

թվակիր իր նամակում, - զուգե մեծցեր ես արդէն, զարհուրեցի՞որէն...» (Նամակային, էջ 280): Նույն թվականի նոյեմբերի 8-ին գրած նամակում Թեքեյանը նորից ու նորից է խոսում Սյուրմեյանի նկատմամբ տածած իր սիրո ու հավատի մասին՝ գրելով, թե կյանքին մոտենալու «... յոյսը տուիր դուն ինծի»: Բայց նույն նամակի շարունակության մեջ Թեքեյանը չի վարանում նաեւ ասելու. «... բացի վերջին նամակը - թուականը օգոստոս 17-ն է, Նաւաճ - եւ առաջին էջին վրայ հանդիպեցայ. «Որքան դժուար է ինծի համար նամակ գրել քեզի: ... Նամակները գիտ ուղղակի կը ջրայնացնես»: Իմ արդարացումս, ճշդիւ» (Նամակային, էջ 284):

Սյուրմեյանի նամակ գրելը Սյուրմեյանի համար այնքան «դժուար» ու «ջրայնացող» մի բան էր դարձել: Մի քանի ամիս հետո՝ 1926 թ., հունիսի 24 թվակիր նամակում Թեքեյանը Սյուրմեյանին գրել է. «Ինծի դեմ նեղեցած ըլլալը ... անկէ կը հասկնամ, որ ամիսներէ ի վեր դուն ալ չես գրեր այլեւս, չես լուր տար...» (Նամակային, էջ 294):

Ու չնայած Թեքեյանի հորդորին՝ «... ամենասիրելի Չաւեն, մոռցիր քո՛ւ՝ Պոլսէն մեկնումեղ ի վեր մեր յարաբերութեանց մեջ այս ամենաերկար ընդհատումը ... եւ շուտով, շուտով գրէ ինծի...» (Նամակային, էջ 295), Սյուրմեյանի գրելի վաճառման ձեռնարկմանն ու նաեւ դրամի ուղարկմանը, բարերարի դիմումին՝ նպատելու համար հիվանդանոցում պառկած Սյուրմեյանի նյութական ու բարոյական ապաքինմանը, նոր նամակ տառալու իր սպասմաններին, այն հույսի տածմանը, թե. «Անգլիեւէնի թարգմանուած քանի մը քերթուածներու կ'սպասեմ», (որոնք այդպէս էլ ինքնիւրեք ոչ թարգմանվեցին եւ ոչ էլ ուղարկվեցին), Սյուրմեյանի անտարբերությունը վերջ չունեցավ:

Սարդ որքան դժբախտ պիտի լինի, որ այսքանից հետո դեմ շարունակի հավատալ: Եվ Թեքեյանը շարունակել է սրտով կապված մնալ իր հոգեւոր գավակի հետ, շարունակել մտաբերել ու հավատալ Սյուրմեյանին նախկին հավաստիացումներին ու այն հույսերին, թե իր ուղարկած նամակների «մի բանը հոգիս մեջի «պարպակները» կցնի», թե «հիացումով ու ժպիտով կշինիմ աչքիս առջեւ բարի պատկերը», թե «երկու «Չաւակ»-ները» ինծի խնայեմ ու չմոռնամ», թե «հացին չափ պահանջ մըն է ինծի համար քոյ նամակները», թե «ես մեկն եմ, որ չհոգիսկիր», թե «օրեր ավելի կթորեւորանա հոգիս, Հայաստանի մէջ ծառ տնկելու եւ արոր բռնելու կարոտս օրեր կ'մեծնա», թե «ես կատնեմ նաեւ կյանքը, որ դուրս է մեր պապերուն հողերէն», թե «ես շատոնց է, որ զինվոր գրած եմ ինքզինս գործիչ ու անուկոր պահպանմանս»: Եվ ամենակարեւորը. «Պահեցե՛ք այս թուրքերը որպէս մուրհակ, ու եթէ իմ կյանքս չըլլա այն, ինչ որ այսքան ատեն կ'կրկնեմ, վառեցե՛ք թուրքերս եւ հիշատակս ալ միասին» (տե՛ս «Սովետական գրականություն» ամսագիր, էր., 1980, թիվ 6):

1926 թ. սեպտեմբերի 4 թվակիր նամակում Թեքեյանը թեւեւ կասկած է հայտնում Սյուրմեյանի՝ իրեն նամակ գրելու վերաբերյալ, սակայն նորից է հավատացնում նրան, որ «ոչինչ գիտ կրնայ անջատել, հեռացնել», սակայն այս նամակը վերջինն է, որ գրվել է նրա կողմից: Սյուրմեյանը հուլիսի 6-ից հետո ընդմիջու դադարել էր Թեքեյանին նամակ գրել: Եվ սա այն դեպքում, երբ Թեքեյանն այս ընթացքում շարունակում էր ապրել իր կյանքի «սեւամարդ» շրջանը. «... ես շատ մեծակ եմ, գրել է Թեքեյանը վերոհիշյալ նամակում, - ես կատարեալապէս դժբախտ կ'զգամ ինքզինքս: Ո՛չ մէկ affection (գորով), ո՛չ մէկը՝

որուն կարենամ վստահիլ...» (Նամակային, էջ 297):

Բարեբախտաբար քիչ չեղան այն երիտասարդները, ովքեր Թեքեյանին շրջապատեցին ու հավատարիմ գտնվեցին նրա հետագա կյանքի ընթացքում: «Չարմանալի է թափօրը Թեքեյանի տոբը», գրում է Շահնուրը Թեքեյանին նվիրված իր «Ոսկէ կշիռը» հոդվածում, - գուրս բաւաստեղծը կը շրջապատէ ուշադիր գուրգուրանքով եւ եղբայրական ազնուագիտ սերով: Անոնք իրն են, ինք գանոնը» (Շ. Շահնուր, Լրագրական էջեր, էր., 2016, էջ 147):

Յավային այն է, որ Թեքեյանը միայն հոգեպես չէ, որ ընկճված էր: Վատացել էր նաեւ նրա առողջությունը, հաճախակի են դարձել շնչարգելությունները: Բայց ամենասարսափելին նրա «առողջ» աչքի վիճակն էր (հասարակական կյանքում ու մամուլում մղված կուսակցական բռնապաշարի հետեւանքով հակառակորդ կուսակցությունը քննախնդրորեն 1916 թ. սեպտեմբերի 7-ին մահափորձ էր կատարել Թեքեյանի դեմ, որի պատճառով նա գրկվել էր իր աջ աչքից), որն այլեւս առողջ չէր ու դադարել էր լավ տեսնելուց:

Ճակատագրի քմահաճույցով՝ Թեքեյանը հենց այս դժվարին շրջանում (1925 թ.) գրեց իր ամենագլայնիկ, խոր ու ողբերգական բանաստեղծություններից մեկը՝ «Մէկ հատիկ...»:

Իմ մէկ հատիկ... օ՛հ ինչպէ՛ս սիրտըս վերայ կը դողայ՝
Երբ կը տեսնեմ քեզմով քեզ.
Զու արցունքովդ քեզի կը պաղատիմ ես հիմա՝

Որ դուն ալ գիտ չըլլես...:

Խոսելով այս բանաստեղծության մասին՝ Շահան Շահնուրն իր վերոհիշյալ հոդվածում գրում է. «Հազուադէպ շատ մը կը սպառնար մարել «Մէկ հատիկ»ին լոյսը:
Շարունակությունը՝ էջ 7

ՎԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ԱԹՈՒԻ ՏԵՂԱԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՅՈՒ ԾՈՒԾ

Սկիզբը՝ էջ 5


Հնագետներ Կ. Հաֆադարյանը եւ Ա. Զաւարթարյանը, անդրադառնալով Դվինի 1937-1939 եւ 1973-1980 թթ. պեղումների արդյունքներին, պնդում են, որ հայտնաբերված կաթողիկոսական պալատը է դարձի կառույց է եւ անմիջական կապ ունի Գյուտ Ա Ռթմեցի կաթողիկոսի օրոք հայոց հոգեւոր կենտրոնը Վարդապատից Դվին տեղափոխելու հետ (Կ. Հաֆադարյան, Դվին քաղաքը եւ նրա պեղումները, I, Երեւան, 1952, էջ 115-116, նաեւ՝ Կ. Հաֆադարյան, Ա. Զաւարթարյան, Դվին քաղաքը եւ նրա պեղումները (1973-1980 թթ.), II, Եր., 2002, էջ 65): Այսպէս օրինակ՝ Կ. Հաֆադարյանը կարծում է, որ պալատը կառուցվել է Գյուտ Արաիեզացու կաթողիկոսության շրջանում, քանի որ «...Գյուտից հետո ոչ մի կաթողիկոս Դվինից դուրս չի հիշատակվել» (Կ. Հաֆադարյան, Դվին քաղաքը եւ նրա պեղումները, I, էր., 1952, էջ 116): Նշենք, որ այս պնդումն ակնհայտ հակասում է Հազար Փարպեցու հաղորդած տեղեկություններին:

Նույն տեսակետն է արտահայտում նաեւ հնագետ Ա. Հակոբյանը՝ նշելով, որ նորարարաց պալատական կառույցը «հավանաբար, կառուցվել է Գյուտ կաթողիկոսի գահակալման ժամանակ»

կաշրջանում՝ 460-470-ական թվականներին, երբ Հայաստանի հոգեւոր կենտրոնը Վարդապատից Դվին է փոխադրվել...» (Н. Акопян, Раскопки центрального кафедрала, Двин IV. Город Двин и его раскопки (1981-1985 гг.), Ер., 2008, էջ 11):

Հնագետները ժամանակագրական առումով թերեւս կարող են պնդել, որ Դվինում պեղված կաթողիկոսական պալատն իրականում էլ դարձի կառույց է, սակայն մեզ հուզող հարցը, այնուամենայնիվ, մնում է չիմաստվորված՝ հայրապետական աթոռը է դարձում Վարդապատից Դվին է տեղափոխվել Գյուտ Ա Արաիեզացու՞, թե՛ Հովհան Ա Մանդակունու օրոք:

Հայր Բարսեղ Սարգիսյանը («Քննադատություն Յովհան Մանդակունույ եւ իւր երկասիրութեանց վրայ», Կենտրոն, 1895, էջ 12) ու Կարապետ Եպիսկոպոս Տեր-Սիւրյանը («Յովհան Մանդակունու եւ Յովհան Մայրազոմեցի», «Շողակաթ Ս. Եջմիածինի» հայագիտական ժողովածու, Վարդապատ, 1913, էջ 86: Հայրապետական աթոռը Դվին տեղափոխելու մասին տե՛ս նաեւ Կարապետ Եպիս. Տեր-Սիւրյան, Հայոց եկեղեցու պատմություն, մասն Ա., Ե. Եջմիածին, 2011, էջ 185-193) եւս հայրապետական աթոռի տեղա



փոխությունը վերագրում են Գյուտ Ա Արաիեզացու:

Ս. Եջմիածին Գեորգյան հոգեւոր ճեմարանի սան Հովսէփ Գրիգորյանն իր «Համազգային նախամեծար Մայր Աթոռ Ս. Եջմիածին» հոդվածում նկարագրում է Հայաստանի մարզպալատական ժամանակաշրջանը. «Վերջինելով հայկական թագավորությունը՝ Պարսկաստանն սկսեց մեր երկիրը կառավարել մարզպալատների ձեռքով, որոնք նստում էին Դվինում: Հայ կաթողիկոսները ստիպված եղան հայրապետական զանգ Վարդապատից փոխադրել Դվին՝ 484 թ., ըստ ումանց՝ մի քիչ ավելի շուտ, քանի որ ի պաշտոնէ լինելով հայ ժո-

ղովորի հոգեւոր գլուխ՝ մշտական շինման մեջ էին երկրի ղեկավարների հետ» (Հ. Գրիգորյան, Համազգային նախամեծար Մայր Աթոռ Ս. Եջմիածին, «Եջմիածին», 1944, 2, էջ 29):


Վերջին շրջանում վիճաբանեց Ստեփան Հարությունյանը, իր ատենախոսության մեջ իմնվելով Մարգարիտ արք. Օրմանյանի հաղորդած տեղեկությունների վրա, հավանական է համարել, որ հայրապետական աթոռը Վարդապատից Դվին է փոխադրվել Հովհաննէս Ա Մանդակունու (478-490 թթ.) օրոք (տե՛ս Ա. Հարությունյան, Վարդապատի վանքերը (պատմավիճագրագիտական ուսումնասիրություն).

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2013, էջ 18, 180): Իսկ «Պատմաբանասիրական հանդեսում» տպագրված հոդվածում նույն հեղինակը նշում է՝ խնդրի առաջվել խոր ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ կաթողիկոսական աթոռը Դվին է փոխադրվել Գյուտ Ա Արաիեզացու կաթողիկոսության սկզբնական շրջանում (Ա. Հարությունյան, Հայրապետական աթոռի՞ Վարդապատից Դվին տեղափոխման հարցի շուրջ, ՊԲՀ, 2013, թ. 3, էջ 161-171):

Այս հավասարակ տեսակետների պատճառը պատմիկների երկերում տեղ գտած ժամանակագրական անճշտություններն են: Այդպիսի անճշտություն կա նաեւ Վարդան Արեւելցու՝ Զաղկերտի ժողովի գումարման եւ Գյուտ Ա Արաիեզացու հայրապետի մահվան թվականին վերաբերող հիշատակության մեջ:

Ս. Չամչյանի աշխատության մեջ Գյուտ Ա Արաիեզացուն վերաբերող մի հետաքրքիր վկայություն կա. «...ե երկի ի տեղի նորայ գլի յաշակերտաց սրբոյն Սահակայ ե Մեսրոպայ գերանելին Գիտ. որ էր ի գաւառէն Տալի ի գեղէն Արաիեզայ, ի հասակի իբր Եթթանասուն ամաց. այր տուր» լի գիտութեամբ եւ իմաստութեամբ եւ քաջ տեղեակ յուսական դպրութեանց, յորդպետութի ի բանս՝ եւ առաւ ի վարդապետութիւնս...» (Միջայել Չամչեան, Նշվ. աշխ., էջ 125):

Շարունակելի
Լիլիթն ՉԱՄԹԿԱՆ



Սկիզբը՝ թիվ 5

1948 թ. Արշիլ Գորկին ինքնասպան եղավ, սակայն անհաջողություններն այդքանով չվերջացան. նկարչի որմնակարներից եւ ոչ մեկը չպահպանվեց: Գորկու հանրահայտ երկու աշխատանքները՝ «Յոթնորենները» եւ «Օրացույցները», այդպէս, իսկ 1962 թ. թվով տասնհինգ գործ Նյու Յորքից Կալիֆոռնիա տեղափոխելու ժամանակ ոչնչացավ ավիավթարի հետեւանքով: Ինչեւէ, այն կտավները, որոնք բախտի բերմամբ պահպանվեցին, արդեն իսկ վկայում են արվեստագետի մեծ տաղանդի մասին: Նկարչի նկարներում երեւան է գալիս նրա հզոր անհատականությունը: Գորկին յուրօրինակ գեղագիտություն է ստեղծել, որի հիմքում ընկած էր այն մեծ կարոտը, որ նա զգում էր ամասպանվելու պարտքը անցյալի հանդեպ:

Գորկին, իր նոր ամերիկյան ինքնությունը հայկական անցյալի հետ համադրելու նպատակով, իր արվեստի միջոցով կերտում է հայրենայաց երկրի երազանման պատկերներն ու սքողում բովանդակային կոդը առաւ, բայց միեւնոյն ժամանակ զուսպ պատկերագրության միջոցով:

ԱՐԴԵՒԼ ԳՈՐԿՈՒ ԱՐՎԵՍՏԻ ԵՆԹԱՏԵՐԱՏԸ

Նկարչի կրկնվող մտավախություններն ու մտահոգությունները ի հայտ են գալիս դեռեւս նրա ստեղծագործության վաղ շրջանում: Արվեստագետն իր հայտնի նկարչական շարքում, այլ տևագույն գաղափարների պես, ուշադիր դիտում է մի լուսանման, որի վրա պատկերված էին ինքն ու մայրը: Այդ լուսանկարն արվել էր այն ժամանակ, երբ Գորկին ընդամենն ութ տարեկան էր: Լուսանկարի գեղակարգական «վերարտադրության» ժամանակ նա արդեն օգտագործում է արդի նկարչական տեխնիկայի իր բացահայտումը, որպեսզի ավելի խորացնի իր խորհրդածություններն անցյալի շուրջ: Նկարիչը կարծես մասնատում է կտավը բաղադրուցի մասերի, իսկ այնուհետեւ փոխակերպում դրանք: Երկու մարմինների տեղերը շատ բծախնդրորեն են որոշված: Մայրը, ով կարծես ինքնապարփակված է իր գեղեցկության մեջ, ականաչիչ նայում է դեպի աւորոշ ապագան: Կնոջ կորացած աչքերը պարունակում են մի մեծ իմաստ, որը դժվար է ընկալել: Թվում է, թե այդ աչքերը քաշում են դիտողին իրենց ուղեծրի մեջ: Որդին, ով մորը ծաղիկ է նվիրում, մեկուսացված է ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանորեն: Նրա կերպարը կարծես վտարանդու տիպար է, իսկ սեւեռուն հայացքը՝ լուռ կարոտի ու ակնածանքի խորհրդանշի:

Թեւեւ Արշիլ Գորկուն մեղադրեցին նրանում, որ նմանակել է Պիկասոյին եւ արդի հանրահայտ այլ նկարիչներին, սակայն նա առավել առատորեն օգտվել է հայկական արվեստի ավանդույթներից: Չարմիկին ուղղված իր նամակի հետեւյալ որվագում նա նկարագրում է հայ արվեստի թաքնված, բայց միեւնոյն ժամանակ խորապես ուսումնասիրված ակունքները:

«Մեր ժողովրդի մեծ արվեստը թաղված է փառանքների եւ գյուղական առօրյա իրականության ներքո: Մեր մեծ արվեստը ստեղծվել է մի անմեղ ժողովրդի կողմից, որը դարեր շարունակ հնարավորություն չունեցավ պատմելու աշխարհին իր նվաճումների մասին: Մենք արվեստագետների ազգ ենք: ... Հայաստանը ոչ միայն գտնվել է աշխարհի խաչմերուկում, այլև վերջինս առավել կուռ է դարձրել» (Նամակ 42):

Գորկին շատ զգայուն էր իր ազգի անցյալի հանդեպ: Նա խորապես հիացած էր տասներեքերորդ դարի վանական Թորոս Ռոսլինով: Վերջինս օգտվում էր տարբեր ավանդույթներից՝ արեւելյան, արեւմտյան եւ բյուզանդական: Ռոսլինը, միախառնելով հայկական ավանդույթները բյուզանդականին հետ, ստեղծել է ճշմարիտ հայկական ինքնապատկեր: 1944 թ. Գորկին հիացմունքով գրել է հետեւյալը. «Թորոս Ռոսլինի արվեստն իրենից ներկայացնում է վերածնունդ: Ինչպիսի հզոր լիցք կարող է իր մեջ պարունակել մարդ արարածը: Աննվազն ինձ համար նա ամենամեծ արվեստագետն է, ում աշխարհը ծնել է արդի շրջանից առաջ, իսկ չափսերի ու ծավալի կիրառման առումով՝ նրան գերազանցել են միայն կուբիստները: ... Ես խոնարհվում եմ մեր Ռոսլինի առաջ» (Նամակ 33): Ավելի ուշ Գորկին, նկարագրելով արվեստի հետ կապված իր մանկական հիշողությունները, կրկին անգամ փառաբանում է միջնադարյան մանրանկարիչների նորարարությունները: Վերջիններիս պատկերած դեմքերը գեղեցիկ են, գույները՝ նոր, գծերը եւ պատկերման ձեւը՝ մեղմ: Գորկուն Ռոսլինի արվեստի մեջ ամենաշատն ապշեցրեց այն, որ դրանցում առկա են մեծ պլաստիկա ու գույնի հմուտ կիրա-

ռում: Սրանք արդի արեւմտյան արվեստների գլխավոր խնդիրներից են: Գորկուն առավել զարմանք պատճառեց այն, որ Արեւմուտքում ոչ ոք չէր լսել մի արվեստագետի մասին, ով կատարելագործել էր նկարչական զգայունությունը՝ բյուզանդացիներից եւ իտալացիներից դարձրել առաջ: Նրանք չէին լսել մի նկարչի մասին, ով պահում էր մի բանալի, որը պիտի բացահայտեր եվրոպական ու ամերիկյան արվեստների որոշ լուրջ խնդիրներ (Նամակ 34):

Գորկին հիասթափված էր արեւմտյան արվեստագետների գեղագիտական տգիտությունից: Այդ զգացումը նրա մեջ պահպանվեց ողջ կյանքի ընթացքում: Իր քրոջ հասցեագրված նամակի հետեւյալ որվագում երեւում է այն, թե ինչպէս է համաշխարհային կոնքրետի հասկացումը նկարչի տեսնանքը ծվատում նրա ազգային արժանապատվության զգացումը:

«Սիրելի Վարդիկ, դու պատկերացնում ես, թե ինչպէս են քննադատները դատարկաբանում: Նրանք դիմալի տակ թաքցնում են իրենց դատարկությունը: ... Նրանք ասում են, թե մայրիկի աչքերը վերցված են Պիկասոյից, իսկ նկարի տխուր տոնայնությունն իբրեւ թե վերցված է բյուզանդացիներից ու ռուսներից: Ես այդ մարդկանց կարծազանքներ հետեւյալ կեղծա: «Ո՛հ, թանկագին պարոնայք, դուք մոլորության մեջ եք, սրանք հայկական աչքեր են»: Այնուհետեւ նրանք տարակուսանքով կնայեն ձեզ ու կասեն. «Նաման դիտարկումները լույս փոքր ազգի շովինիզմից բխող չափազանցություններ են»: ...Երբ ես փորձում եմ բացատրել իմ գաղափարները, եւ նրանք ինձ ազգայնամուլ են կոչում, ես վրդովվում եմ» (Նամակ 29):

Շարունակությունը՝ էջ 8

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ - ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ. ՄԵՐՏ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՆԴԱՐԱ ԲՎԺՎՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 6

Փոխադրուեցաւ հիվանդանոց (Օթել Տիտ): Հրապարակ ելավ Կերոնականի իր սաներէն երիտասարդ մը, որ կը շարունակէր իր ուսումը, օրապահիկը շահելով հանդերձ: Այս պատուական հայորդին (Թեքեյանի կյանքում այդպիսի մի նվիրյալ հոգի էլ եղավ բանաստեղծ ժազ Դակոբյանը, ով Թեքեյանի կյանքի վերջին տարիներին անմիացորդ հոգատարություն ու սեր ցուցաբերեց քերթողի նկատմամբ) որդիական սիրով կառնեցավ հիւանդի սնարին: ... Թեքեյան խորունկ սփոփանք քաղեց իր այս երիտասարդ բարեկամին հոգածու վերաբերումէն: Երիտասարդը հիւանդանոց կը փոխար ամէն օր, առանց բացառութեան» (Նույն տեղում, էջ 148-149): Շահնուրն այդ երիտասարդի մասին գրում է, որ նրա աշխատատեղում բռնկված իրոցեհի պատճառով այրվել է, եւ ինքը մամուլից («Պայքար» օրաթերթում) պետք է որոնի նրա մասին երգած տեղեկությունը: Իսկ հուլայանականությունը մասնակցած Թեքեյանի մասին վկայում է. «Ինքը կը մարդ շշմած, անեացած: Երկու ձեռքերը պարզած էր դեպի առաջ, օգտուրին հայցելու ձեւով եւ իր դէմքը առած էր մեղրամոմի գոյն» (Նույն տեղում, էջ 149):

Սի բան ակնհայտ է. Թեքեյանն այդ «տիպը» մեջ փնտրել ու գտել է իր իսկ խկությունը, եւ այդ երիտասարդների մի մասն էլ հանձնի Թեքեյանի գտել է իր որությունս միթարանքը եւ հովանավորին: Թեքեյանը, ինչպէս գրում է Արշիլ Տատրյանին ուղղված իր նամակներից մեկում, ինքը «հեռու էր որամանքի ըլլալէ» եւ սա-

կայն իր սուղ միջոցներից օգնում էր շատերին:


Նորից հարցնենք՝ ինչն էր պատճառը, որ խզվեցին Թեքեյանի ու Սյուրմեյանի՝ այնպէս մեծարված հոր ու փայլալից ավանդի հարաբերությունները:

Մեկությունները տարբեր են եղել նաեւ գրական շրջանակներում:

Սյուրմեյանի գրող, խմբագիր, Վ. Թեքեյանի նախնին ասել, մտավորական Պետրոս Չարոյանն այս խնդրին անդրադարձել է շատ ավելի կտրուկ: Բեյրութում լույս տեսնող «Անի» ամսագրում 1952 թ. տպագրած իր «Վահան Թեքեյան այնպէս՝ ինչպէս ճանչցալ զինք» հոդվածում խոսելով կյանքի ընթացքում Թեքեյանի կրած հիասթափությունների մասին՝ «պահուկաբար խոչորագոյնը» նա համարում է Սյուրմեյանից կրածը: «Կը մտածիմ ընդվզումով ու ցասմամբ: Որովհետեւ ... Վահան Թեքեյան, իր ազնուական ապստեղի կառուցով, կրնար չորհրդի իր հիմքերի՝ դասայլութեանց մեծագոյնին հանդէպ: Երբ ամառվաղ այդ դասայլութիւնը կու գար մէկէն, որուն վրայ կեղծոնացուցած էր իր բովանդակ հաւատը: Ինքզինք անոր մէջ ու անով՝ իրագործուած եւ ամբողջացած տեսնելու աստիճան:

Վահան Թեքեյան Գարաշար խաբուեցաւ Պրն. Լեւոն Չաւեն Սիւրմեյեանէն» (տե՛ս Նշված ամսագիրը, հունվար, էջ 37):

Այնուհետեւ Պ. Չարոյանը գրում է, որ ինքը պիտի մերժեր անունն անգամ տալ «պարոնի մը», թե՛ այն կապված չլինէր Թեքեյանի անվան հետ. «կապ» գր շահագործեց այնքան շուկայի վարպետութեամբ» (Նույն տեղում, էջ 487):



ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ

ապաղը ընթացքը, որի մեջ հայտնվելու էր ինքը, թե՛ շարունակելու հայրենի գրել ու ստեղծագործել: Իսկ այդ մասին Թեքեյանին գրել նշանակում էր դավաճանել կրկնակի եւ, ինչպէս ասված է «Աստվածաշնչում», «ուրանալ» դեռ աքաղաղը չկանչած»:

Այն, որ Ավետիս Սանճյանը Լու Անդրեւսում տպագրած իր «Վահան Թեքեյան. նամակային» գրքի ծանոթագրությունների բաժնում նշում է, թե Սյուրմեյանն իրեն ասել է, որ Թեքեյանին չգրելու պատճառն իր հիվանդությամբ չանհանգստացնելն է եղել, պարզապէս չի համապատասխանում իրականությանը:

Շարունակելի
Արթուր ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Սկզբը՝ էջ 5
Մենք կանգ ենք առնում Երզնկացու մեծ դրամայի առջեւ, որ գալիս է բազում թշնամիներից:

Չի շատ կսկիծ ու վեր ի մարդկան է յիգ հասել, Իմ սիրտս է խոց գուգած՝ դառն վառք է գիս տանջել:

Այստեղ Կոստանդինը հասնում է հանճարեղ ընդհանրացման՝ բանաստեղծին համարելով դառն ցավերի մեջ տանջվող եւ խոցված սրտով մի մարդ:

Միջնադարի մեծագույն տաղերգուն անգետների դեմ մղած պատերազմի բնութագրման, նոր ձեւի ու բովանդակության հաստատման հետ միասին բոլորովին նոր կողմից եւ շատ հստակ է ներկայացնում նաեւ բանաստեղծի կերպարն ու կոչումը: Նա բանաստեղծին համարում է գարնա-նային «հարաւ հողմ», որ ծաղկունքով, սիրով, վայելքով է լցնում աշխարհը, վերացնում ցուրտն ու սառնամանիքը եւ աշխարհը ողորդում գեղեցկության ու կարոտի մեղեդիներով:

Երբ որ ինչեք հողմըն հարաւ, Չիկն տըրտուրիս յերկր տարաւ, Հանց՝ որ չըկայ տեղ մի ծարաւ, Ամենալ էն բարութեամբ լըցել: Կամ՝ Այսօր եղայ հողմըն գարնան, Սիրով ինչեքն էի բուրաստան, Չիկն առն ու պաղ ցուրտ ձմեռեան, Ի մեր տեսուս հայածեցան: Հրաման կուտամ ես ծաղկունքն՝

ԿՈՍՏԱՆԻՆ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԵՆԱՐՔԸ

Փրոբն տերեւ խիտա գուն ու գուն, Չի է հասակաց գարուն, Այլ բանդ չըկայ եւ ոչ զընդան:

Բայց, ահա, երեւում է, որ «անմեղ ու բարի» ծառայություններն իր դարի մեջ պահանջում են խիզախություն ու պատերազմ: Ոչ միայն կյանքում, այլ հենց պոեզիայի մեջ եւս բանաստեղծը նմանվում է այն հարավային հողմին, որ պատերազմ է մղում ցրտի ու սառնամանիքի դեմ, վատապատում բազում թշնամիներ, որ թվում է՝ ողջ երկիրն է հարձակվել մերկ ու անզոր բանաստեղծի վրա, եւ թշնամիներն ուզում են թափել նրա աշխարհը:

Այդպես է Երզնկացին տեսնում բանաստեղծի դերը: Նա գտնում է, որ պոեզիան ստեղծվել անհուն ցավերի ու տառապանքի միջոցով, որ բանաստեղծը նման է ծովի հատակից մարգարիտ հանող խիզախ նավաստուն: Այդ անողոր պատերազմից, ցավոտ երկունքից ու խիզախ որոնումներից են ծնվում Կոստանդինի տաղերը: Ամեն դեպքում նոր սկիզբ դնող բանաստեղծի երգի ստեղծումն ինքնին լույսի ու խավարի հավերժական պատերազմի հոգեբանական արտացոլանքն է, որ բնորոշ է ոչ միայն միջնադարին, այլեւ բոլոր ժամանակներին:

Պատերազմը բանաստեղծի ու միջավայրի միջեւ հասնում է ողբերգական կիզակետին. նա գերադասում է բնակվել մարդկանցից հեռու, գագանների մեջ:

Լավ է ինձ մեջ գագանաց մարդակերպ ընկալելով, Զանց անմիտ՝ Լ անիմաստ, որ յիս խօսի յանգետ բանով...

Ողբերգությունը հասնում է տիեզերական չափերի, եւ Երզնկացու ապրումներն արձագանքն են տիեզերական Ողբերգու-

թյան: Դեռեւս իհն աշխարհի եգիպտական գրականության մեջ մենք հանդիպում ենք այսպիսի տողերի:

Ո՛րմ այսօր սիրտս բացեմ, ամենուր վատն է բարձրանում, բարին բարկոծվում է ամեն տեղ:

Ո՛րմ այսօր սիրտս բացեմ, չի հիշում անցյալը ոչ ոք, բարու դեմ բարի չսպասես:

Ո՛րմ այսօր սիրտս բացեմ, չկան արդարներ, երկիրը տրված է հոգով շեղվածներին:

Ո՛րմ այսօր սիրտս բացեմ, ուսերիս բեռն է թշվառության, եւ չկա հոգեկից ընկեր:

Ո՛րմ այսօր սիրտս բացեմ, չարիքը հեղեղել է աշխարհը, նրան ոչ վերջ կա, ոչ սահման: Մահը թվում է ինձ այժմ հիվանդության բուժում,

ազատում՝ տանջանքի շղթաներից: Տե՛ս «Հին Արեւելքի պոեզիա», Եր., 1982, էջ 30-32:

Այդպիսի անանձնական, համամարդկային ցավերով վառված ողբերգական ապրումներ է ունեցել հայ մյուս հանճարեղ բանաստեղծ՝ արդեն Երզնկացուց 6 դար հետո: Աշխարհի գեղեցկությունների, սրբությունների կորուստներից արյունոտված Իսահակյանի սիրտը նույնպես հեռանում էր մարդ-աշխարհից (իսկ մեկ դար առաջ նույն ապրումների մեջ էր տիեզերքի մյուս հանճարը՝ Բայրոնը): Նա գերադասում է բնակվել «մեջ գագանաց»:

Իմ սեզ քարավան, գնա՛ մի՞րճվի՛ր անապատի մեջ՝ վայրի ու բոցոտ, Եվ ինչեանիդ այն պղնձացած,

չեն ծաղկեր միայն, գագանների մոտ: Խփեն վրանըս, օձ-կարիճների բռների գլխին վրանըս խփեն,

Այնտեղ բլուր անգամ ես ապահով եմ, քան թե մարդկանց մոտ,

Կեղծ ու ժպտարեմ: Ես չեմ կամենա ողջունել մարդկանց, նրանց սեղանից պատտա չեմ կտրի,

Գագանների մոտ հացի կկտտեմ, ողջունը կառնեմ բորեկներին:

Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 2, Եր., 1958, էջ 49

Հին եգիպտական բանաստեղծության եւ Իսահակյանի պոեզի ընդհանրական հերոսները մահ են գերադասում. մեկը տանջանքի, տառապանքի շղթաներից ազատվելու, հոգով շեղվածների երկրից հեռանալու համար փախազում է անուշաբույր, բուրավետ, կապույտ կամ, ինչպես Սիամանթուն կասեր, «ամենագուր մահ», իսկ մյուսը՝ Եվ գագանները թող ինձ հոշոտեմ, կարգազ հողմերը շաչեն ինձ վրա...

Նույն տեղում, էջ 50
Մեր տաղերգուն էլ է խորհում մահվան մասին եւ միաթարվում այն մտածությամբ, որ մահը շուտով այցի կգա մարդուն ու գեղեկարելով կտանի՝ փարատելով ցավ ու վիշտ:

Ոչ յիշես զմահն ի մօտիկ, որ գերդ ըզգող ըզմարդն որսար. եւ դա՛ջիլ հանց հասանել վերայ մարդուն՝ որ չկայ ճար:

Գա զընտու հարթած ի բուն եւ քեզ գերե ինք գերեվար, եւ ոչ տար մի պահ քեզ թող կամ ընդունի ոսկի կաշառ:

Ոչ եղբայր սիրուն մղեմ, ոչ սիրելի եւ կամ օտար:


Կամ թե այն քեզ գայ ի դեմ որ դու սքորտով ինչե հաճեցար:

Շարունակելի
Կարդան ԵՐԶՆԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՐԵՎ ԳՈՐԿՈՒ ԱՐՎԵՍԻ ԵՆԹԱՏԵՔԱՏԸ

Սկզբը՝ էջ 7
Այրուհանդերձ՝ Գորկու կանվածությունը Ռուսիայում վայելում է ոչ միայն այն բանի մասին, որ նա օժտված էր սուր աչքով, այլեւ՝ որ այդ երկու արվեստագետները նման են իրար: Ամենագլխավորն այն է, որ Գորկու արվեստը յուրօրինակ է ու ընդգրկում: Նրա անսովոր նկարչական ուրվագծերը կարծես նմանակում են մանրանկարների պայծառությունը, փայլը եւ զվարթությունը: Չկաշկառված ուրվագծերը լցնում են տարածությունը շարժուն երանգներով: Ռուսիյի գարմանահրաշ ուրվագծերով լի նկարագրողունները հիշեցնում են մեզ Արշիլ Գորկու կտավների վառ նկարչական ձեւերը: Ըստ որոշ մեկնաբանների՝ Գորկու կուրիոզը բխում է հայկական մշակութային ծառանգությունից: Գորկին ոգեշնչվել է Վանի եւ Արարատյան շրջանի գորգերի հարուստ մոտիվներից: Վերջիններս արտացոլված են Սարգիս Պիծակի գործերում: Յիշեցնենք, որ Պիծակը Կիլիկիայի վերջին ամենահայտնի մանրանկարիչն էր: Գորկին մինչեւ հայրենիքը լքելը արդեն իսկ ծանոթ էր թե՛ Պիծակի գործերին, թե՛ հայկական կարպատների մոտիվներին (տե՛ս Mooradian K., Arshile Gorky Adoian (Chicago, Gilgamesh Press, Ltd., 1978), էջ 184-85):

Գորկին իր ստեղծագործություններում կիրառում է բնական գույներ եւ իր հայրենյաց երկրի պատկերները: Քրոջը գրած նամակներից մեկում ասում է հետեւյալը. «Ես սովորեցի գույնի կիրառումը, երբ նկարում էի Գուրին ձմերի վրա: Հայաստանի բնությունն իրենից մի անսպառ գույնատիվ է ներկայացնում: Վերջինիս մեջ մեկ անգամ թաթախված վրձինները կարեն իրենց իսկ երգերի հնչյունների կերպը» (նամակ 32): Այնուհետեւ Գորկին խոսում է այն մասին, թե որքան շատ է ինքը ոգեւորված հայոց պատմությամբ ու երգով. «Թանկագիններս, հավանաբար դրա



պատճառն այն է, որ ես շատ լավ եմ հիշում պատմություններ պատմողի «արժաթե» երգերը եւ Ադրյանների երեկոյան ընթերցումները: Երբ ես նկարում եմ, ոգեշնչվում եմ համար գգում եմ հայկական երգի ու պոեզիայի կարիքը: Թումանյանի բանաստեղծությունները երգելով արտասանելը անհրաժեշտ է, որպեսզի ես ստեղծագործեմ: Նրա աչքերը նման են ծովի, իսկ մարդիկ խորատուզվում են նրա սեւեռուն հայացքի մեջ» (տե՛ս Bedrosian M., The Magical Pine Ring: Culture and the Imagination in Armenian-American Literature, Detroit, Wayne State University Press, էջ 213):

Այս դրվագները ձեւավորում են Գորկու գեղագիտության հիմքը: Գորկին օգտագործում է ասցասախ կերպարը՝ շղթափելային ազատություն ձեռք բերելու համար: Այդ ազատությունը պետք է հնարավորություն ընձեռեր նկարչական գույնի ու ձեւի անալիզի մեծ անկախություն ունենալու: Արշիլ Գորկու կոմպոզիցիայի կարտեզ անանձնահատկությունն այն էր, որ նա շարունակաբար պատկերում էր նույն կերպարը՝ մինչեւ կատարելության հասնելը: Այն, ինչը Գորկու աշխատանքները դիտելիս վերացական պատկեր է թվում,

կրականում էր գործի փոխակերպված կերպարն է: Այստեղ խոսքը Գորկու հայրական այգու խաչածե ծառի եւ լեռան մասին է: Վերջինս, ի դեպ, կոչված էր պտղաբերություն պարգեւելու:

Երբ Գորկու արվեստը զարգացում ապրեց, նա դարձավ առավել ինքնավստահ՝ իբրեւ հայկական օջախի գլուխ: Նրա ներքին տենչանքը հավասարակշռվեց կոմիկական թեթեւության միջոցով, ինչպես նաեւ պաշտպանվածության զգացումով, որը երեսն է գալիս նրա կտավներում, ինչպես, օրինակ, «Օրացույցները» գործում: Վերջինս հանդիսանում է Գորկու գլուխգործոցներից մեկը: Սրաւում հումորային կերպով պատկերված է մի ընտանիքի երեկուն:

կրակարարի դիմաց: Կտավում ներկայացված յուրաքանչյուր ֆիգուր նույնացվում է թորթաջող եւ չափազանց նատուրալիստական գույների միջոցով: Քննադատ Ռենդը, մեկնաբանելով այդ նկարը, ցույց է տալիս ամեն մի նկարչական ձեւի զարգացումը եւ դրա վերջնական արտահայտչական: «Ցուցարկերով իր նկարչական ոճի խորհրդանշաններից մեկը՝ Գորկին կիրառում է գույնը թե՛ ձեւի նույնականությունից խուսափելու եւ թե՛ այն մթագնելու համար: Նա այս տեխնիկան հասցրեց կատարելության: Արվեստագետը նախ եւ առաջ կիրառում էր գույնը՝ ձեռք նույնացնելու համար: Նա նաեւ նպատակ էր հետապնդում դիտողին շփոթության մեջ գցել՝ միեւնույն սովորելով կրկնելով անտրամաբանական ու միեւնույն ժամանակ դուրեկան տեղակայումը» (Ռենդ, 125):

Նշված կտավը նմանապես ցուցադրում է Գորկու գալյունությունը փոքր դեռակների հանդեպ, որոնք հաղորդակցվում են մարդու ու նրա տրամադրության հետ: Ժիշտ նույն բանը կատարվում էր Ռուսիյի մանրանկարներում: Հագեցած լինելով նման կապերով՝ Գորկու նկարներն անմի-

ջական կապի մեջ են մտնում նրա հետ:

Մի անգամ Գորկին քննադատել է պուրոնեալիստներին՝ ասելով. «Սյուրռեալիզմի հետեւորդներին քիչ են հետաքրքրում արվեստի պակտուրները եւ դրանց որակը: Այդ մարդիկ արքեպեմ են անբացատրելի անարժեքներով: Սյուրռեալիստների գաղափարները բավականին տարօրինակ են եւ փոքր-ինչ անլուրջ: Դրանք գրեթե զվարճալի են: Իրականում նրանք այնքան լուրջ չեն մտնենում նկարչությանը, ինչպես որ հարկ է: Արվեստը պետք է մշտապես լուրջ եւ անկեղծ լինի: Հավանաբար մեր մոտեցումների տարբերությունը պետք է բացատրել նրանով, որ ես հայ եմ, իսկ նրանք՝ ոչ: Արվեստը պիտի լուրջ լինի, առանց արկածալի եւ կոմիզի: Մարդը չի կարող ծծարել մի բանի վրա, ինչն ինքը սիրում է» (նամակ 39):

Ներկայացված դրվագը հստակորեն արտացոլում է հայերին բնորոշ զգայունությունը:

Թեւ Գորկու արվեստն ունակ է պրոբելտել հումոր, սակայն այն երբեք չի կարելի բնութագրել իբրեւ անլուրջ:

Շարունակելի
Տիգրան ՍԱԼՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրտսեակ, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝ «Երիտաղյան Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Մամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

Կայք՝ krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 3.4.2017թ.

Տպագրանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ